Ավետիք Իսահակյան

Սալոնում, կրովի մոտերում

Սալոնում, կրովի մոտերում
Հայդուկն է ընկել խոր վերքը սրտին, -
Վերքը վարդի պես բացված կարմրորուն,
Ու ձեռքն է գրցել կոտրած հրացանին:

Արնոտ դաշտերում ծրդրիդն է ծրդրում,
Հայդուկն է ընկել մահվան խոր քընով.
Հայդուկը հոգում երազ է տեսնում,-
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ…

Տեսնում է… արտում շընկշընկում,
Փայլուն գերանդին զընգում է անո՛ւշ.
Ու փոցխ են քաշում սիրուն աղջրկունք՝
Հայդուկի վրրա երգելով անո՞ւշ…

Սալոնում ամպեր են անցնում,
Հայդուկի վրրա արծիվն է գալիս.
Ա՜խ, սև աչերը արծիվն է հանում.

Հայդուկի վրրա ամպերն են լալիս…

1900
Քյուսնախտ